Բժշկական թափոնների նվազեցման հույժ անհրաժեշտությունը

Երևան, 20 դեկտեմբերի, 2006 թ.

«Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» կազմակերպությունը 55 երկրներում գործող ավելի քան 450 խմբերի միջազգային կոալիցիա է, որի անդամ է հանդիսանում նաև «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունը: Քանի որ մարդու առողջությունը սերտորեն կապված է շրջակա միջավայրի առողջության հետ, իսկ բուժական խնամքը հիմնվում է Հիպոկրատի «Նախ, մի վնասիր» սկզբունքի վրա, մենք կարծում ենք, որ բուժհաստատությունները պետք է, հնարավորության դեպքում, խուսափեն աղտոտող գործելակերպից: Կոալիցիան աշխատում է բուժական արդյունաբերությունն փոխակերպել այնպես, որ այն լինի էկոլոգիապես կայուն և չվնասի մարդկանց և շրջակա միջավայրին: Կոալիցիայի անդամներն են՝ հիվանդանոցները, բուժմասնագետները, բուժքույրերը, համայքային խմբերը, առողջությամբ մտահոգ անձինք, պրոֆմիությունները, առողջության և շրջակա միջավայրի հարցերով զբաղվող կազմակերպությունները:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության մեջ ընդգրկված են փորձառու մասնագետներ՝ համաճարակաբաններ, բնապահպաններ, թունաբաններ, հիգիենիստներ, գիտնականներ: ՀԿ-ն տեղական կենտրոնների ազգային ցանց է, որն աշխատում է կայուն զարգացման, մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ: Քանի որ բուժհաստատությունները կոչված են բնակչության առողջության պահպանմանը, նրանց առաջնահերթ խնդիրն է չաղտոտել շրջակա միջավայրը: Կազմակերպությունն աջակցում է առողջության և շրջակա միջավայրի հիմնախնդիրների լուծմանը՝ կրթության, տեղեկատվական և հետազոտական ծրագրերի, որոշումներ կայացնողների նկատմամբ լոբբինգի, տեղեկատվական նյութերի ստեղծման, հրատարակման և բաշխման, միջազգային և ազգային կոնֆերանսներին ու համաժողովներին մասնակցելու միջոցով: Կազմակերպության հեռագնա նպատակն է՝ մեր երեխաներին՝ առողջ միջավայր, Հայաստանին՝ առողջ սերունդ:

Առողջապահության պրակտիկ աշխատողները՝ բժիշկները, բուժքույրերը ձգտում են պաշտպանել մեր ընտանիքի և հասարակության առողջությունը: Սակայն, իրականում բուժհիմնարկների գործունեության ընթացքում գոյացած թափոնները ոչ ճիշտ կառավարման դեպքում աղտոտում են արտաքին միջավայրը և ազդում մարդկանց առողջության վրա:

Մեր հիմնական նպատակը պետք է լինի՝ առողջապահությունը վերափոխել այնպես, որ այն դադարի մարդու և շրջակա միջավայրի համար վնասի աղբյուր լինելուց, որի համար անհրաժեշտ է պրակտիկ

առողջապահության բնագավառում բացառել հատուկ վտանգավոր աղտոտիչների առկայությունը՝ չգնալով զիջումների մարդու առողջության համար անվտանգության հարցերում:

Դրան կարող է նպաստել թափոնների քանակի նվազեցումը, սեգրեգացիան /տարանջատումը/, վերամշակումը, կրկնակի օգտագործումը, մշակման այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառումը, տոքսիկ նյութերի օգտագործումից աստիճանական հրաժարումը և այլն:

Բժշկական հիմնարկությունների թափոնների 30%-ը կարելի է վերամշակել, կրկնակի օգտագործել, որը կպակասեցնի թափոնների գոյացումը:

Անհրաժեշտ է

- Փոփոխել բժշկական արդյունաբերության և առողջապահության վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ՝ բացառելով բժշկական թափոնների առանց տարբերակման այրումը:
- Քարոզել թափոնների վերամշակման էկոլոգիապես մաքուր մեթոդներ:
- Լուսաբանել բժշկական աշխատողներին և ազգաբնակչությանը դիոքսինի, սնդիկի և այլ քիմիական նյութերի վնասակարության մասին:
- Հանդես գալ որպես բժշկության մեջ պոլիվինիլքլորիդ պարունակող պլաստիկների, սնդիկի և կայուն տոքսիկ քիմիկատների օգտագործման աստիճանական դադարեցման կողմնակից:
- Մշակել ստանդարտներ բժշկական թափոնների անվնաս և ճիշտ ոչնչացման համար:
- Ձգտել հասարակության բժշկական արտադրությունում օգտագործվող քիմիկատներին իրազեկ լինելու իրավունքի ճանաչմանը: